

# ԻՆՉ Ե ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց՝ Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ ՀՍԻՉ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՅԵՐԵՂԱՆ

1930 թ.

11

2

1



# ԻՆՉ Ե ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց՝ Լ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԻՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԹԵՐԵՎԱՆ

1980 թ.

A  
H  
8074

ՀԱՅԳՈՒԳՐԱՅ

Գրառեղակար 4076 բ.

Պատմ. № 1760

Տիբաժ 1000



## 1. ԻՆՉ Ե ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեև գիտությունն ասում է, վոր աշխատանքն առողջության և մարդկային բախտավորության ամենաթանկագին աղբյուրն է, սակայն սլիտի ասենք, վոր այդ ճիշտ և վոչ բոլոր պայմաններում: Յուրաքանչյուր մի հին աշխատավոր իր անձնական փորձով գիտե, վոր առաջ մեղանում, յերբ կապիտալիստական իրավակարգն եր ապրում, աշխատանքը վոչ միայն ուրախություն չեր պատճառում և առողջություն չեր տալիս աշխատավորին, այլ և ընդհակառակը, քայքայում եր նրա առողջությունը, մեռցնում նրա կենսութախտությունը: Այդ հակասությունը հետևանք եր այն բանի, վոր բուրժուական հասարակակարգում դարեր շարունակ մի բուռն մարդիկ՝ կապիտալիստներ և կալվածատերեր դալթեյ եյին հարստության բոլոր աղբյուրները. և՛ հողը, և՛ ջուրը, և՛ դործարանները, և՛ հանքերը, և՛ հարստության բոլոր աղբյուրները. տիրում եյին և ոգտադործում բազմամիլիոն գյուղացիների և բանվորների աշխատանքն ամենաանտանելի և խայտառակ սլայմաններում, առանց վայրկյան անգամ մտածելու բանվորների և գյուղացիների առողջության կամ կյանքի այլ սլայմանների բարելավման մասին, այլ միայն և միայն իրենց անձնական շահն եյին հետապնդում: Յեւ ընչադուրկ բանվորն ու գյուղացին իր ֆիզիքական գոյությունը մի կերպ մի քանի տարի

ևս քարչ տալու համար ստիպված եր գիշեր և ցերեկ, տնով ու տեղով աշխատելու իր գործարանատիրոջ և կալվածատիրոջ համար ամենատաժանելի պայմաններում: Ահա այդ եր պատճառը, վոր և բանվորը շուտ եր փչացնում իր առողջութունը, թունավորում իր որդանիզմը գործարանային վնասակար գաղերով և վաղաժամ մահանում: Կային գործարաններ, վոր բանվորների համար բացարձակ գերեզման էլին, վորովհետև նրանցում աշխատողը, անկախ իր առողջութունից, 2-3 տարուց հետո գնում եր սև մահի գիրկը: սառը գերեզման: Բանվորը հաստատապես գիտեր այդ, բայց և այնպես հարկադրված եր իր տանջալի կյանքը քարչ տալու համար աշխատել այդ ճիւղերում, վորովհետև ինչպես ասեցինք վերևում, ամբողջ իրավունքն ու իշխանութունը կապիտալիստի ձեռքումն եր, վորն աշխատանքի ինչպիսի պայմաններ կամենար կարող եր թելադրել և հարկադրել բանվորին աշխատելու վատ սարքավորված, կեղտոտ, մութ և խոնավ գործարաններում և առողջության համար միանգամայն սպանիչ պայմաններում:

Կապիտալիստը մի նպատակ ուներ միայն. վորքան կարելի յե շուտ և շատ ոգուտ ստանալ բանվորից, այդ պատճառով ել նա անխնա քամում եր նրա ամբողջ ուժը և ապա դեն չալրտում նրան, ինչպես մզած լիմոնն են չալրտում:

Պարզ ե և բնական, վոր նման պայմաններում, աշխատանքը վոչ առողջության և վոչ ել ուրախության աղբյուր եր աշխատավորի համար, այլ նրա մահը նյութող և արագացնող մի միջոց:

Յեկ իսկապես, բանվոր դասակարգի՝ պրոլետար-

րիատի առողջութիւնը և ֆիզիքական զարգացումն ամենուրեք անհամեմատ վատ եւ յեղեւ, քան քիչ թե չատ ապահովված դասակարգինը, անդամ գլուղացիութեանը, վոր դարձյալ շատ և աշխատում և ծանր աշխատանք տանում, բայց բացողյա և չգիտի, թե ի՞նչ եւ գործարանն իր ճնշող ողով, յերկարատե ու լարված աշխատանքով, խոնավութեամբ, մթութեամբ, թունայի դաղերով և փոշիով:

Յեթե մենք գործարանային բանվորներին համեմատելու լինենք չրջապատի բնակչութեան հետ, կտեսնենք, վար ընդհանրապէս բանվորը կարճահասակ եւ, կուրծքը սեղմված և քաշը պակաս: Այդ եր պատճառը, վոր գինեակոչի ժամանակ, դինապարտ բանվորներին ավելի մեծ տոկոսն եր անհամապատասխան ճանաչվում:

Բանվորների շարքում մահացութիւնն եւ և մեծ, մոտ 3-5 անգամ ավելի, քան վոչ բանվորական բնակչութեան մեջ:

Կան մի շարք լուրջ ու ծանր հիվանդութիւններ, վոր տարածված են բացառապէս բանվորների մեջ և մյուս դասակարգերին անծանոթ են, այդ պատճառով եւ նրանք կոչվում են «արհեստակցական» (թունաւորումն արձկնով, սնդիկով և այլն): Մովորակուն ծանր հիվանդութիւններից բանվորների մեջ առանձնապէս շատ և տարածված թոքախտը, վոր «սլոնտաւրի հիվանդութիւն» անունն և ստացել և բաւականին առատ հունձ և անում:

Բացի այդ բոլորից, բանվորներին վախճիներն եւ գործարանային աշխատանքի պայմանների ազդեցութեան տակ վատառողջ են լինում. նիհար, կարճահաս-

տակ, սեղմված կրծքով և մոտավորապես ավելի թույլ ու անընդունակ, քան նրանց հասակակից յերեխաներն այլ դասակարգերից:

Բանվորուհիները ծանր աշխատանքի հետևանքով կորցնում են իրենց կանացիութունը՝ մայր դառնալու ընդունակութունը: Նրանցից շատերը մնում են անպտուղ (չբեր), իսկ մյուս մասն ել, թեև հղիանում ե, բայց մեծ մասամբ հղիութունը վերջանում ե անհանդիմանալի դարձերով: Կամ վիժում են, կամ մահացած և կամ նվազ յերեխա ծնում, վոր յեթե վոչ իսկույն, բայց շատ կարճ ժամանակից հետո մահանում են: Ըստ վիճակագրական տվյալների՝ Բերլինում բանվորուհիներից յուրաքանչյուր 100-ը տալիս են վաղաժամ ծննդաբերության 18 դեպք, մինչդեռ, ունևոր դասակարգում լինում ե 7 դեպք. մահացած յերեխաների ծնունդ լինում ե 33-ը, իսկ հարուստների շրջանում՝ 11-ը:

Վերջապես շնորհիվ կապիտալիստների անհոգ վերաբերմունքի և տեխնիքական անվտանգութան հրակողության բացակայության, դժբախտ դեպքերն ել մյուս կողմից են բանվորներից կյանք խլում և հազարավոր խեղանդամներ ստեղծում: Ըստ վիճակագրական տվյալների՝ Յեվրոպայի խոշոր գործարաններում նախապատերազմյան շրջանում տարին մեկ և կես միլիոն դժբախտ դեպք եր պատահում, վորոնցից մոտ 17 հազարը մահացու:

Ռուսաստանում տարեկան 300.000 դեպք եր պատահում, վորից 25 հազար ծանր, իսկ 5.000 մահացու:

Անշուշտ կարելի յե աշխատանքի պայմանները գործարանում այնպես առողջացնել և այնքան բարելավել,



վոր բոլոր տեսակի դժբախտ պատահարները, ինչպէս  
և զարհեստակցական՝ հիվանդացումները վերանան :  
Իրա համար հարկավոր ե միայն, վոր գործարանատե-  
րը նախ և առաջ մտածե աշխատավորների առողջու-  
թյան մասին և ջանք ու միջոց չխնայե այն ապահովե-  
լու : Սակայն ապահ ու անսիրտ կապիտալիստը, տար-  
ված իր անձնական շահերով, յերբեք այդ մասին չի մը-  
տածել, չի մտածում և միշտ ել խոչընդոտ ե հանդի-  
սանում ու հալածում նրանց, ովքեր այդ ուղղու-  
թյամբ վորեւե , թեկուզ մի աննշան բան են անում :

Իերենք մի ցայտուն որինակ. աղվամազ ստանալու  
համար մշակում են նապաստակների ու ճաշարների  
մորթիները, գործածելով թունալի լուծվածքներ, վո-  
րոնց մեջ ամենաթունալի տարրը սնդիկն ե : Մոսկվայի  
նահանգում հաղարավոր տնայնագործ դյուղացիներ  
գրադվում եյին այդ արհեստով՝ աղվամազ պատրաս-  
տելով և գործադրում սնդիկից պատրաստած լուծ-  
վածք (դեղ) : Յեւ ի՞նչ. նկատված եր, վոր հարյուրա-  
վոր մարդիկ թունավորվում եյին, կանայք կամ վիժում  
եյին, կամ վատառողջ յերեխաներ ծնում, վոր շուտով  
մեռնում եյին : Այդ յերևույթը բժիշկների ուշադրու-  
թյունն ե դրավում և ահա մի բժիշկ գործուղվում ե  
Ֆրանսիա աղվամազ պատրաստելու աշխատանքի այն-  
տեղի պայմաններն ուսումնասիրելու : Պարզվում ե,  
վոր Ֆրանսիայում աղվամազ պատրաստելու համար  
բոլորովին անվնաս և շատ պարզ դեղ ե դոնված, վորի  
դադտնիքը դյուտարարները հայտնում են գործարանա-  
տերերին վորոչ վարձատրություն ստանալուց հետո  
միայն :

Ձեռակելով վոր բանվորների առողջության համար



Բոլորովին անվտանգ դեղեր եյին գտնված աղվամազ  
պատրաստելու համար, բայց և այնպես գործարանա-  
տերերը զլանում են մի քանի կոպեկ ծախսել նոր դեղի  
դադարեցնել իմանալու համար և դերադատում են թու-  
նալի դեղը գործադրել և հարյուրավոր բանվորների  
տանջալի մահի յենթարկել:

Ահա և աշխատանքի պաշտպանության նպատակն  
ե կռվել այդ բոլոր քննորմալ և հիվանդոտ յերևույթ-  
ների հետ. վերացնել աշխատավորի համար վտանգա-  
վոր և վնասակար պայմանները, վորպեսզի դժբաղդ  
դեպքեր չլինեն, վերացնել բանվորների համար ուժից  
վեր ծանր աշխատանքները, կատարելով այն համապա-  
տասխան մեքենաների միջոցով և առողջացնել աշխա-  
տանքի պայմանները այնպես, վոր աշխատանքն իսկա-  
պես առողջության աղբյուր դառնա և հաճույք պատ-  
ճառե աշխատավորին:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այդ հնարա-  
վոր կլինի իրագործել միայն կապիտալի իշխանության  
վերացումով:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ

Աշխատանքի պաշտպանության բոլոր պահանջները  
լրիվ չափով կարող են իրականանալ միայն կոմունիստի  
ժամանակ, այսինքն այնպիսի հասարակարգում,  
յորք այլևս դասակարգեր չեն լինի, քաղաքական  
և տնտեսական իշխանությունը կվերացվի, յորք  
և՛ գործարանները, և՛ հողը, և՛ անտառները, և՛  
ջրերը, և՛ ստորերկրյա հարստությունները իսկապես  
կդառնան ընդհանուր ժողովրդական սեփականություն:

Հասարակական հասարակակարգում ամեն մի շահա-  
հաս ու աշխատունակ քաղաքացի կաշխատի ընդհանու-  
րի ոգտին, առանց անձնական շահ վորոնելու և առանց  
ուրիշի աշխատանքն ոգտադործելու: Այդպիսի հասա-  
րակակարգում իսկապես կվերանա մեկ-մեկու շահա-  
դործելու ձգտումը: Այն ժամանակ և՛ գիտությունը,  
և՛ տեխնիկան առաջ կերթան և աշխատանքը թեթևաց-  
նելու, առողջացնելու և հաճելի դարձնելու բոլոր մի-  
ջոցները կստեղծվեն, վորոնք անարգել և լայն շահով  
կիրարկության կգրվեն, վորովհետև այն ժամանակ չի  
լինիլ ներկայումս գոյություն ունեցող խոչընդոտը՝  
ձեռնարկատիրոջ գրպանի շահը: Այն ժամանակ բոլոր  
տաղանդավոր գիտնականներն ու գյուտարարները՝  
նարտարագետները, քիմիկոսները, բժիշկները և այլն  
ամբողջ իրենց խելքն ու միտքը, ուժն ու կարողությու-  
նը կլարեն և կտրամադրեն կոմունիստական հասարա-  
կությանը, իրրև նրա հարադատ անդամները, ինչպես  
այդ ներկայումս անում են առաջավոր կապիտալիստա-  
կան յերկրներում (Անգլիայում, Գերմանիայում, Ամե-  
րիկայում և այլուր) հոգուտ խոչոր կապիտալիստների  
ստանալով նրանցից խոչոր վարձատրություն:

Ահա և այդպիսի պայմաններում, յերբ յուրաքան-  
չյուր մի քաղաքացի իրեն կոմունիստական հասարա-  
կության հարադատ անդամը կհամարի, ուրեմն և ամ-  
բողջ արտադրության տիրը, ինքնին կվերանա և աշ-  
խատանքի պաշտպանության կարիքը, վորովհետև այլ  
ևս աշխատանքը պաշտպանելու հարկ չի լինիլ, քանի  
վոր այն շահադործող չի լինի— կվերացվի «տեր» և  
«ծառայող կամ վարձկան բանվոր» հասկացողությու-  
նը. միաժամանակ բոլոր քաղաքացիները և՛ տեր և՛

բանվոր կլինեն և պարզ ե, վոր իրենք ել կհոգան, վոր իրենց աշխատանքն արդյունավետ, առողջ և հաճելի լինի իրենց համար:

Բոլորովին այլ պատկեր և ներկայացնում այժմյան կյանքը. քաղաքական և տնտեսական ամբողջ իշխանությունը գտնվում ե մի փոքրաթիվ դասակարգի ձեռքում և ահա նա, յեղնելով իր դասակարգի շահերից, անխնա ճնշում ե մյուս՝ աշխատավոր դասակարգին ու չի խնայում վոչ վոքի. վոչ ծերերին, վոչ կանանց ու վոչ մանուկներին. այդ պատճառով ել ներկայիս կյանքը մի դաժան պատերազմ ե յերկու հիմնական դասակարգերի միջև— բուրժուազիայի և պրոլետարիատի: Թեև բուրժուական դասակարգը անհամեմատ փոքրաթիվ ե, բայց նա չափազանց ուժեղ ե, վորովհետև պետական իշխանությունը իր գաղտնի գործակալություններով և «ազատ» դատարանը միշտ պատրաստ են ճնշելու ու «խելքի» բերելու հակառակորդ դասակարգին— պրոլետարիատին ի դիպ նրա քիչ թե շատ գիտակցության հասած անդամների «ըմբոստության» — ձգտումի գեթ աննշան չափով իրենց վիճակը բարելավելու:

Պրոլետարիատը—բանվոր դասակարգը կարող ե դիմադրել կապիտալի զորությանը և կառավարության իշխանությանը, յեթե նա հանդես ե գալիս գիտակցաբար, համերաշխ և կազմակերպված յեղութներով: Բանվորական շարժման ճնշումի տակ են միայն գործարանատերերը համաձայնվում դիջումների ճանապարհը բռնել և հարկադրել իրենց կառավարությանը, վոր բանվորների վիճակը թեթևացնող որոնքներ հրատարակվեն: Այս ճանապարհով ե, վոր բանվորական

կաղծակերպություններն ու արհեստակցական ժիւղ-  
թյունները բոլոր յերկրներում հաշոդում են վորոշ  
չափով աշխատանքի պայմանները թեթեւացնող որենք-  
ներ կորզել բուրժուական կառավարություններից :  
Բայց պիտի ընդգծել, վոր ինչ զնով ել ձեռք բերված  
յինեն այդ թեկուղ աննշան նվաճումները, այնուամե-  
նայնիվ նրանք հարատեւ չեն. բավական ե, վոր բանվո-  
րական շարժումը մի քիչ թուլանա և կամ աշխատանքի  
շուկայում բանվորական նոր գործադուրկ ձեռքեր ա-  
ռաջանան, իսկույն և յեթ հրապարակված որենքները  
կամ վերաացվում են, կամ կրճատվում և  
կամ կասեցվում : Իսկ յեթե դրանցից և վոչ  
մեկը չի պատահում, այն դեպքում գործա-  
րանատերերն ուղղակի հրաժարվում են այդ  
որենքները կատարելուց և կամ կատարում են մա-  
սամբ միայն, վորովհետեւ բանվորական որենքները  
կիրառելու վրա հսկիչներ են նշանակվում դարձյալ  
նույն բուրժուական դասակարգի ներկայացուցիչնե-  
րը, վորոնք սերտ կապ են պահպանում վոստիկանու-  
թյան հետ և վերջնիս թելադրանքով շարժվում, ինչպես  
այդ անում եյին գործարանային տեսուչները նախկին  
ցարական Ռուսաստանում :

Այս բոլորից պարզ ե, վոր կապիտալիստական հա-  
սարակաւարդում աշխատանքի պաշտպանությունը վոչ  
այլ ինչ եր, յեթե վոչ թղթյա դոյակ, ամաղի վրա կա-  
ռուցված. բավական ե մի թեթեւ քամի փչի և նա ողը  
կցնդի :

1917 թ. հոկտեմբեր ամսումն եր, վոր առաջին ան-  
գամ Ռուսաստանի բանվորները գյուղացիների և զին-  
վորների ոգնությամբ տապալեցին ցարին, նրա հետ



միասին և բուրժուազիայի իշխանությունը և հիմնեցին  
Բանվորագյուղացիական Խորհրդային Իշխանություն։  
Հետագայում ստեղծեցին Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետությունների Միությունը, (վորի մեջ մըտ-  
նում ե նաև Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային  
Հանրապետությունը) վորն այլևս այն կապիտալիստա-  
կան յերկիրը չե, ինչ նախկին Ռուսաստանը, վորովհե-  
տե բոլոր խոշոր գործարաններն ու ձեռնարկություննե-  
րը, հանքերն ու արդյունաբերությունը, ամբողջ հողն  
ու ջուրը, հաղորդակցության բոլոր միջացները խլված  
են իրենց միահեծան տերերից և ազգայնացված են։  
ամբողջ ժողովրդի սեփականություն դարձված։ Այս  
այսպես լինելով հանդերձ ՍՍՀ Միությունը դեռ լրիվ  
չափով կոմունիզմի չի հասել, վորովհետե դեռ գոյու-  
թյուն ունի մասնավոր մանր և միջակ սեփականատիրու-  
թյունը քաղաքներում և գյուղացիական տնտեսության  
սեփականությունը գյուղերում։ Ահա այս և պատճառը,  
վոր ՍՍՀՄ աշխատանքի պաշտպանության կարիքը  
դեռ կա։

### Յ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒ- Թ ԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱ- ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշխատանքի բնագավառում Խորհրդային հանրա-  
պետությունների հրատարակած որոնքների նմանը չկա  
և վոր մի այլ յերկրում։ Խորհրդային Իշխանության ո-  
րոնքները լրիվ չափով բավարարում են ամենաառաջա-  
վոր բանվորների և նրանց կազմակերպությունների՝  
արհեստակցական միությունների պահանջներին։

Նախ և առաջ պիտի նշել, վոր մեր որոնքները տա-

բաժնովում են անխտիր կերպով բոլոր վարձու աշխատանք կատարողների վրա, անկախ այն բանից, թե նրանք վորտեղ են գրադված. պետական, կոոպերատիվ, հասարակական թե մասնավոր, խոշոր թե մանր հիմնարկություններում, ձեռնարկություններում, տնտեսություններում, թե մասնավոր տներում: Սա արդեն ինքնին մի խոշոր նվաճում է պրոլետարիատի համար, վորովհետև վոչ խորհրդային յերկրներում գոյություն ունեցող որենքները տարածվում են բացառապես խոշոր գործարանային արդյունաբերության բանվորների, այն ել վոչ բոլոր կատեգորիաների վրա, և վարձու աշխատավորների խոշորագույն մասը՝ արհեստանոցներում աշխատողները, յերկաթուղային և ջրային ճանապարհների վրա աշխատողները, պետական, հասարակական և մասնավոր զանազան տեսակի գրասենյակների, դրամատների ծառայողները, հիվանդանոցներում, դեղատներում, բաղնիքներում, ճաշարաններում, թեյարաններում, հյուրանոցներում, առևտրական հաստատություններում և նման այլ հիմնարկներում աշխատողները, ինչպես և տնային ծառայողները միանդամայն զուրկ են աշխատանքի պաշտպանությունից: Բացի այդ շատ և շատ յերկրներում աշխատանքի պաշտպանության որենսդրությունը չի տարածվում և գյուղատնտեսական ու կառուցողական բանվորների վրա:

Յարական Ռուսաստանում առաջ աշխատանքի պաշտպանության աղճատ որենքները տարածվում եյին միմիայն գործարանային բանվորների վրա, այն ել այն դեպքում, յերբ նրանց թիվը գործարանում մեքենայական շարժիչ լինելու դեպքում 16 հոգուց ավելի

յեք լինում, իսկ արհեստանոցային բանվորների վրա բոլորովին չեյին տարածվում: Այդ հանգամանքից կարողանում եյին ոգտվել շատ և շատ գործարանատերեր, վորոնք զանազան զարտուղի ճանապարհներով հեշտությամբ հաջողում եյին իրենց գործարան-ձեռնարկությունները սովորական արհեստանոցներ հայտարարել և ազատվել գործարանային որենքներն իրենց հարյուրավոր բանվորների նկատմամբ կիրառելու պարտականությունից:

Մինչդեռ, ինչպես վերևում ասացինք, խորհրդային որենքները տարածվում են անխտիր կերպով բոլոր տեսակի վարձու աշխատավորների վրա, անգամ անկախ այն բանից, թե նրանք ո՞ւմ մոտ, ի՞նչ բնագավառում և վո՞րքան ժամանակ են աշխատում:

Աշխատանքի Որենսդիրքն առաջին անգամ հրատարակվեց 1918 թվին, վորը հետագայում վերանայվեց, լրացվեց, ավելի կոնկրետացվեց և հրատարակվեց 1922 թվին, վորպիսին և գործադրության մեջ և մինչև որս:

Անհրաժեշտ ե նշել, վոր խորհրդային Աշխորենսդիրքն ընդգրկում ե աշխատանքային նորմաների այն նվազագույն չափը, վորը և վոչ վոքի կողմից և վոչ մի դեպքում չի կարող խախտվել՝ պակասեցվել, սակայն չի արգելվում և վոչ վոքի սահմանված նորմաները ավելացնել, ընդարձակել, վոր և իրականության մեջ կատարվում ե աշխատանքային անհատական և հավաքական պայմանագրերով, անգամ արհեստակցական միությունների միջոցով կնքված բոլոր այն պայմանագրերը, վոր ավելի սեղմում և նվազեցնում են վարձու աշխատավորների իրավունքներն ու արտոնու-

թյուռները, բոլոր այն պայմանագրերն ու համաձայնությունները, վորոնք ընդդեմ Աշխորհնադրքի վատթարացնում են աշխատավորների դրությունը անվստիքի են համարվում և յերբեք չեն կարող հաստատվել Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատի մարմինների կողմից, ուրեմն և դատարաններում չեն կարող հաշվի առնվել:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

50 տարուց ավելի յե, վոր բոլոր յերկրների բանվորները կատաղի պայքար են մղում 8 ժամյա բանվորական որ պահանջում: 30 տարուց ավելի յե, վոր ամեն տարի մայիսի 1-ին բոլոր յերկրներում բանվորությունը դադարում և աշխատելուց և ցույցեր կադմակերպում, վորով և սնդում և ութ ժամյա բանվորական որ սահմանելու իր պահանջը, սակայն, մինչեւ այժմ կապիտալիստական բոլոր յերկրներում բանվորներին ութ ժամից ավել են աշխատեցնում:

Մինչ վերջին իմպերիալիստական պատերազմը միայն հեռավոր Այստրալիայումն և, վոր բանվորների յերկարատեւ և կատաղի պայքարի հետեւանքով ութ ժամյա բանվորական որ և սահմանված:

Իմպերիալիստական պատերազմի ընթացքում, մահովանդ անմիջապէս նրանից հետո, յեվրոպական պետությունները վախենալով ընդհանուր հեղափոխության բռնկումից բանվորության ուժեղ ճնշման տակ ստիպված յեղան ժամանակավորապէս վորոշ զիջումներ անել և ութ ժամյա բանվորական որ մտցնելու մասին որոնք հրատարակեցին, վորով և քնեցրին վոչ բավականաչափ դիտակցության յեկած բանվորությանը և հեղափոխության բռնկումն ու կապիտալիստների իշ-



խանության տապալումը կանխեցին։ Այդ բանում կապիտալիստներին խոշոր չափով աջակցեցին նաև բանվորության դավաճան հաշտվողական առաջնորդները, վորոնք համոզում էին բանվորներին, վոր իբր թե հեղափոխությունը դեռ չէ հասունացել, դեռ պետք է սպասել և առաջադրում էին առայժմ իրենց դրությունը լավացնել բուրժուազիայի հետ համաձայնության դալով՝ մասնակի զիջումներ ստանալով։

Չանցած մեկ-յերկու տարի, պարզվեց, վոր բուրժուազիայի բոլոր զիջումները, անգամ ութ ժամյա բանվորական որվա մասին որենքն իսկասպես ժամանակավոր և խափուսիկ էին։ 1919 թ. սկսած համարյա բոլոր բուրժուական յերկրներում կապիտալն իր համերաշխ արչալն սկսեց և գլխավորապես ութ ժամյա բանվորական որվա դեմ և շատ տեղերում (Գերմանիայում, Լեհաստանում և այլն), հաջողվեց այդ որենքի բացարձակ կամ թե ծախյալ փաստացի վերացումը, և ներկայումս Գերմանիայում խոշոր ձեռնարկություններում բանվորական որը 1-2 ժամով յերկար է, քան 1919-20 թվականներին։

Յարական Ռուսաստանում որենքով թեև սահմանված եր առ առաջին 11 1/2 ժամյա բանվորական որ, բայց փաստորեն հաճախ ավելի յերկար եր տևում։

Ռուսական հեղափոխության առաջին շրջանում կերենսկու համաձայնողական կառավարության որոք շատ տեղերում սահմանվեց ութ ժամյա բանվորական որ, սակայն այդ կատարվում եր հայտարարության ձեվով և կառավարությունը, վորում աշխատանքի միջնիստը սոցիալ-դեմոկրատ եր, չեր ուզում ութ ժամյա բանվորական որն որինականացնել և համապատասխան որենքը հրատարակել։

Թորհրդային Խճիանությունն իր դոյության 4-րդ  
որն իսկ 1917 թ. հոկտեմբերի 29-ին դեկրետ հրատա-  
րակեց ութ ժամյա բանվորական որ անցկացնելու հա-  
մար, իսկ առանձնապես առողջության համար վնասա-  
կար արտադրության մեջ (ծխախոտ, դաղերի, քիմիա-  
կան ներկերի, ապակու, հախճապակի, սառերկրյա  
(դեմոնի տակ) աշխատանքներում), 4, 6 և 7 ժամյա  
բանվորական որ կիրառվեց հեղափոխության առաջին  
իսկ սրկց սկսած:

Դիչերային աշխատանքների համար սահմանված և  
7 ժամյա բանվորական որ, ըստ վորում աշխատավար-  
ձը վճարվում ե ինչպես ութ ժամյա աշխատանքի հա-  
մար:

Գրասենյակային աշխատանքի համար, վոր մտա-  
վոր ուժերի մեծ լարումն ե պահանջում, ուրեմն և ա-  
վելի հոգնեցուցիչ և՛ սրգանիղմը մաշող ե, քան Ֆիզի-  
քական աշխատանքը, 6 ժամյա որ ե սահմանված:

Իբրեւ ընդհանուր սրենք, արդելվում ե ամեն տե-  
սակի արտաժամյա աշխատանքը և այն թույլատրվում  
ե բացառիկ դեպքերում, այն ել բացառապես արհմիու-  
թյան համաձայնությամբ և աշխատանքի պաշտպանու-  
թյան տեսչության թույլտվությամբ և միեմնույն աշ-  
խատավորի համար վոչ ավելի, քան իրար վրա 2 որ և  
որական 2-ական ժամ, իսկ ամբողջ տարում վոչ ավելի  
քան 120 ժամ, ըստ վորում արտաժամյա աշխատանքը  
վարձատրվում և առաջին 2 ժամը մեկ ևկես անդամ ա-  
վելի. իսկ հետագա յուրաքանչյուր ժամը կրկնակի  
շախտի:

Նուրաքանչյուր մի վարձու աշխատավոր, իրա-  
վունք ունի շարաթվա բնթացքում անընդ՝ատ 42 ժամ  
հանգստանալու, բացի տոն և հատուկ հանգստի օրե-

րից, վորի հետեւանքով և՛ հանդատյան և՛ տոն սրերի նախորյակին ամենուրեք ութ ժամյա որը 2 ժամով կրճատվում ե:

Վերջապես նշենք և այն, վոր 5 1/2 ամիս վարձու աշխատանք կատարող բոլոր անձինք համաձայն Աշխորենսգրքի վայելում են տարվա մեջ յերկշաբաթյա հերթական արձակուրդի իրավունք: Բացի հերթական արձակուրդից, առողջության համար վնասակար արտադրության մեջ աշխատողները, ինչպես և անչափահաս (18 տ. փոքրերը) բանվորները վայելում են նաև յերկշաբաթյա լրացուցիչ արձակուրդի իրավունք:

Արձակուրդների տեսակետից ել մենք անչափ առաջ ենք գնացել, քան կապիտալիստական յերկրները, ուր նման որեւէ միայն վերջերումս ե հրատարակված, այն ել շատ աղճատ: Ավստրիայում ծառայողները տարվա մեջ յերկշաբաթյա արձակուրդ են ստանում, իսկ բանվորները (այն ել վոչ բոլոր) մի շաբաթյա արձակուրդ և տաքին լրանալուց հետո միայն: Շվեդիայում 7 տարին անցնելուց հետո յե միայն մի շաբաթվա արձակուրդ տրվում: Լեհաստանում տարին անցնելուց հետո յե բանվորներին (այն ել վոչ բոլորին) մի շաբաթյա արձակուրդ տրվում, իսկ Զեխո-Սլովակիայում միմիայն լեւնադործ բանվորներն են 5 որյա արձակուրդ ստանում:

Արձակուրդների մասին հրատարակված դեկրետը խորհրդային յերկրներում իրազործվում ե ամենայն ճշտությամբ և խստությամբ, և այժմս չկա մի ձեռնարկություն, վոր խախտի այդ որեւէ և վորի աշխատավորները չկարողանան ոգտազործել իրենց արձակուրդի իրավունքը. բացառիկ դեպքում միայն այն ել գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովի (վորում

մասնակցում են ձայնի և պարիտիտի համաձայն իրաւ վունքով աշխատավորների տեղական կոմիտեն)։ Վորոշմամբ միայն հերթական արձակուրդը կարելի չէ հետաձգել հետեւյալ տարում ոգտադործելու համար և կամ դրամով փոխհատուցել, իսկ վնասակար արտադրութեան մեջ աշխատելու համար, բանվորներին տրվող լրացուցիչ արձակուրդը, ինչպես և անչափահասների հերթական և լրացուցիչ արձակուրդը վոչ մի դեպքում չի թույլատրվում փոխհատուցել դրամով ինչպես և հետաձգել հետեւյալ տարւմանը։

Թե՛ հերթական և թե՛ լրացուցիչ արձակուրդների տեւողութեւնն անհատական և համաքական աշխատանքային պայմանագրերով կարող են յերկարացվել, սակայն, յերբեք չեն կարող կարճվել։

Աշխատավորի առողջութեւնը պահպանելու, նրա որդանիղմը կադուրելու և սպառած ուժը վերականգնելու տեսակետից խոշոր դեր են խաղում արձակուրդները, մանավանդ, վոր խորհրդային ԽՍՀՄ-ում խաւաւար հնարավորութեւն և տալիս արձակուրդավոր բանվորներին և ծառայողներին իրենց արձակուրդները ձրիարար (բնակարան, սնունդ, յերբեմն և հագոււստ) անցկացնելու տեղական խորհուրդների, արհեստակցական միութեւնների և սոցիալական ապահովագրութեան մարմինների կազմակերպած հանգստի տններում։

Առատ և կանոնավոր սնունդ և տրվում, մարմնամարդութեւն, զանաղան դվարձալի խաղեր, դրական-յերաթշտական յերեկոներ են կազմակերպվում։ Իսկ յեթե ի նկատի առնենք, վոր հանգստի տները կազմակերպված են ողաւատ, ծաղկալետ և բարեխառն կլիմա ունեցող վայրերում՝ նոխկին կարիւծատերերի,



վանքապատկան և այլ ամառանոցներում (Հայաստանում — Ծաղկաձորում, նախկին նահանգապետի բնակարանում, Ղարաքիլիսայում՝ նախկին միլիտնատեր Թայիրյանի ամառանոցում, Դլիշանում — նախկին հարուստ Հարությունյանի ամառանոցում) արդեն ակնհայտ կլինեն մեր խոշոր նվաճումներն աշխատանքի պաշտպանության բնադավառում, վերին հավասարը և վոչ մի յերկրում մինչև որս չկա և համարվում է ցընորք:

## 5. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

Խորհրդային Իշխանությունն առանձին խնամք և հոգատարություն է ցույց տալիս կին աշխատավորուհիներին նկատմամբ, յեղնելով նրանից, վոր նրանք Ֆիզիքապես ավելի թույլ են, քան տղամարդիկ, և ասպանրանք հանդիսանում են մեր սպազա սլոսլատարիատի մայրը:

Ահա և այդ է պատճառը, վոր մեր Աշխորենսպրըքով միանգամայն ասպհովված է կանանց աշխատանքի պաշտպանությունը. 1) կանանց արգելված է ծանր և առողջության համար վնասակար արտադրություններում աշխատել, ինչպես և ստորերկրյա (դետնի տակ) և դիշերային աշխատանքներ կատարել: Գիշերային աշխատանքը կանանց թույլատրվում է ընդհանրապես խիստ բացառիկ դեպքերում, այն ել բացառապես Աշխատանքի Ժողովրդական Կոմիտարիատի և Արհեստակցական Միությունների Համամիութենական Կենտրոնական Խորհրդի համաձայնությամբ և վորոչ ձեռնարկություններում, ինչպես որինակ՝ հետսղրատներում, հեռախոսարանի կայաններում և քոչկա-սանիտարական հիմնարկներում, ըստ վորում հղի և ստնտու-

կանանց միանգամայն արգելվում է թե՛ դիշերային և թե՛ ընդհանուր արտատաճյա աշխատանք կատարելը :

Հրատարակված է հատուկ ցուցակ այն ձեռնարկությունների, վորոնք առողջության համար վնասակար են նանաչված և վորոնցում կանացի աշխատանքն արգելված է :

Իբրև որենք արգելվում է կանանց աշխատեցնել ծանրություններ փոխադրելու աշխատանքներում , յեթե աշխատանքները կապված չեն նրանց մշտական արհեստի հետ , ըստ վորում այդպիսի աշխատանքները նրանց բանվորական որվա  $\frac{1}{3}$  մասից ավելին չեն խլելու և փոխադրվող ծանրոցներն ել 4 կիլոյից (10 դրովանքս) ծանր չեն լինելու :

Պետք է նշել և այն , վոր այն ձեռնարկություններում , վորոնցում գլխավորապես կանայք են աշխատում (ինչպես որինակ կար ու ձեովի) կանանց ամիսը մեկ անգամ 2 կամ 3 որով արձակուրդ է տրվում (դաշտանի չրջանում) :

Առանձին ուշադրություն է դարձված բանվորուհի մայրերի աշխատանքի պաշտպանության վրա : Բանվորական քոլոր կադմսակերպությունների գլխավոր պահանջներից մեկն ել այն է , վոր բանվորուհին մայրության շրջանում ըստ հնարավորության յերկար ժամանակով ազատվի աշխատանքից , պահպանելով իր աշխատավարձը և աշխատանքը , վորպեսզի թե՛ բարեհաջող ծննդաբերություն ունենա և թե՛ կատարելապես կադդուրի իր որդանիդմը , վոր սաստիկ թուլանում է ծննդաբերությունից հետո :

Յարական 1912 թ . որենքներով հղի բանվորուհին աշխատանքից ազատվում եր 2 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 4 շաբաթ ել հետո , ընդամենը 6 շա

բաթով: Ժամանակակից բուրժուական յերկրներից չա-  
տերում միջին թվով աղատվում են 8-ից մինչև 12 շա-  
բաթով: Միմիայն խորհրդային յերկրներումն է, վոր  
Աշխորենադրքով սահմանված և ֆիզիքական աշխա-  
տանքով դրադված բանվորուհիներին աղատել աշխա-  
տանքից ութ շաբաթ ծննդաբերությունից առաջ և ութ  
շաբաթ ել հետո, իսկ մտավոր աշխատանքով դրադված-  
ներին վեց շաբաթ ծննդաբերությունից առաջ և վեց  
շաբաթ ել հետո: Միաժամանակ հրատարակված և մը-  
տավոր աշխատանքների բավականին ընդարձակ մի-  
ջանկ, վորն աշխատավորուհիներին 16 շաբթյա արձա-  
կուրդի իրավունքն և տալիս՝ աշխատանքից աղատ-  
վում են ութ շաբաթ ծննդաբերությունից առաջ և ութ  
շաբաթ ել հետո: Աշխատավորուհիների այս կատեգո-  
րիաներին են պատկանում հեռախոսի և շեռադրի վրա  
աշխատողները, դթության քույրերը, բժշկական կադ-  
մի մեծագույն մասը, մասսափիսոկաները, առամնա-  
բուժները, դեղադործները, ուսուցիչները, դաս-  
տիարակչուհիները, մեքենադրուհիները և ուրիշ շատե-  
րը: Բացի դրանից, 16 շաբթյա արձակուրդի իրավունք  
են վայելում գիշերային աշխատանք կատարող բոլոր  
կանայք, անկախ նրանց աշխատանքի բնույթից (ֆիզի-  
քական թե մտավոր):

Բավական չե այդ, Խորհրդային Աշխորենադրքով  
ստիտու կանանց համար նաև սահմանված և աշխա-  
տանքի 2 հատուկ ընդմիջում ի հաշիվ աշխատաժամերի  
յուրաքանչյուրը վոր պակաս  $\frac{1}{2}$  ժամ տեղի ությաժբ,  
վորով հնարավորություն և տրվում նրանց իրենց մա-  
նուկներին կանոնավոր կերպով կերակրելու, իսկ խոշոր  
ձեռնարկություններում, ուր կին աշխատավորուհիներ  
չատ կան, Խորհրդային Իշխանության և Արհմիության

պահանջմամբ կազմակերպվում են մասնական հատուկ մասունքներ իրենց բոլոր հարմարություններով և սպասարկությամբ, վորով ավելի յե կանոնավորվում և լավանում կանանց աշխատանքի պայմանները:

Մի հանգամանք ևս անհրաժեշտ և ընդգծել, այդ այն և, վոր աշխատավորուհին հղության և ծննդաբերության հետեւանքով վոչ միայն ստանում Ե լրիւ աշխատավարձը հաւելյալ դադումով հանդերձ և պահպանում իր թե՛ հերթական և թե՛ լրացուցիչ արձակուրդի, ինչպես և իր պաշտոնի իրավունքը, այլ ծննդաբերության հետեւանքով նպաստներ և ստանում. միանվազ նպաստ մանկական ոժիտ պատրաստելու համար (որորոց, հաղուստեղին, անհրաժեշտ փաթաթաններ և լաթեր) և ապա նարբերանի նպաստ 9 ամիս շարունակ մանկանը կերակրելու — ուժեղ սնունդ տալու համար: Այդ նպաստները տրվում են թե՛ բնականով և թե դրամով ըստ աշխատավորուհիների հայեցողության ու պահանջի:

Աշխատավորուհիների համար աշխատանքի պաշտպանության քնադավառում ուրիշ շատ և շատ արտոնություններ կան սահմանված, վորոնց մեկիկ-մեկիկ թիւելը մեզ շատ հեռուն կտաներ, ինչպես բրինակ. արդելված Ե հղիության և ծննդաբերության հետեւանքով արձակուրդում յեղող աշխատավորուհիներին կրճատելը, հղի և սանտու աշխատավորուհիներին հակառակ իրենց կամքի մի աշխատավայրից այլ աշխատավայր փոխադրելը, կամ դործուղելը, թեկուզ ժամանակավորապես և այլն, և այլն: Այս բոլորն աշխատավորուհիների համար այնպիսի նվաճումներ են, վորպիսիք մինչև որս և վոչ մի այլ յերկրում չկա:



## 5. ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ո՞վ չգիտե, վոր փոքրահասակների և դեռահասների որդանիզմը շատ մատղաշ է և թույլ, ուրեմն և չի կարելի նրանց աշխատանքով ծանրաբեռնել և ուժից բարձր աշխատանքներում ոգտադործել: Այդ գիտեն բոլորը և ընդհանուր մի իմաստուն առած կա, վոր ասում ե. «Պահպանիր հաղուստդ նոր ժամանակից, իսկ առողջությունդ փոքր հասակից» (« Береги пламя свечи, а здоровье с молодости »), սակայն բուրժուական յերկրներում վոչ վոք այդ հարցով չե հետաքրքրվում. կապիտալիստին հժանադին բանվորական ուժ ե հարկավոր և նա չարաչար կերպով շահագործում ե և փոքրահասակին՝ 10-12 տարեկան մանուկներին, նրա հոգսը չե, թե այդ ի՞նչպես կանդրադառնա մանուկների առողջության վրա և ի՞նչով կվերջանա:

Սորհրդային իշխանությունը այս հարցումն ել շատ ե առաջ դնացել, քան վորեւե իմա «լուսավորված» յերկիր: Պրոլետարիատի սերունդը առողջ պահելու նպատակով խորհրդային յերկրներում փոքրահասակներին՝ մինչև 14 տարեկաններին աշխատեցնելը խիստ արգելված ե, իսկ 14 տարեկանից բարձր մինչև 16 տարեկաններին թույլատրվում ե աշխատեցնել շատ բացառիկ դեպքերում, այն ել բժշկական քննությունից հետո, բացառապես աշխատանքի պաշտպանության տեսչության թույլտվությամբ, վորոնց համար սահմանված ե 4 ժամյա բանվորական օր և դյուղատնտեսական թեթև բացոթյա աշխատանքներումն ե (հորթարած, գառնարած, սաղնարած և այլն), վոր թույլատրվում ե ավելի յերկար աշխատեցնելը:

Այդ քաջառությունը արվում է այն դեպքում  
ժխան, յերբ ընտանիքը խիստ կարոտության մեջ է և  
հարկադրված է իր փոքրահասակ զավակներին աշխա-  
տանքի ուղարկել: 16-ից մինչև 18 տարեկաններին  
թույլատրվում է աշխատել, վորոնց համար սահման-  
ված է 6 ժամյա աշխատանք և բացի յերկշաբաթյա  
հերթական արձակուրդից նաև յերկու չաբաթյա լրա-  
դուցիչ արձակուրդ, ըստ վորում կտրականապես ար-  
գելված ի դիշերային, արտաժամյա, ստորյերկրյա  
դետնի տակ) աշխատանքները, ինչպես և աշխատանքը  
առողջության համար վնասակար արտադրություննե-  
րը, վորոնց մասին հատուկ որոնք և ցուցակ է հրատա-  
րակված:

Բոլոր դեռահասները, բանվորները առաջնության  
իրավունք են վայելում հանգստի տներ և սանատորիա-  
ներ ուղարկվելու նկատմամբ: Համաձայն հրառարակ-  
ված հատուկ որոնքի, բոլոր դեռահասները չափահաս  
բանվորների հետ հավասար իրավունքներն ու արտո-  
նություններն են վայելում և կրճատ 4 և 6 ժամյա բան-  
վորական որվա համար լրիվ չափով վարձատրվում,  
ինչպես 8 ժամյա բանվորական որվա համար: Բացի  
այդ դեռահասների ծնողներին և խնամակալներին,  
ինչպես և աշխատանքի պաշտպանության մարմիններին  
իրավունք է վերապահված կնքված աշխատանքային  
պայմանագիրը լուծված հայտարարելու, յեթե այն ձե-  
ռնառ չե և կամ յեթե աշխատանքը վնաս է բերում դե-  
ռահասի առողջությանը: Միաժամանակ բոլոր դեռա-  
հասները իշխանության կողմից տարին մեկ յերկու ան-  
դամ պարապելի կերպով բժշկական քննության են յն-  
թարկվում ի հաշիվ ձեռնարկատերերի և քննության  
արդյունքը ներկայացվում է աշխատանքի պաշտպա-  
նության մարմիններին:

Վորպեսզի ապահովվի դեռահասների աշխատանքը, մյուս կողմից ել վորակյալ բանվորներին ժառանգող սերունդ պատրաստվի, արգելվում է դեռահասների կրճատումը և թույլատրվում է այն միմիայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իսկ վորպեսզի դեռահասներին պաշտպանել անտեղի և ավելորդ կրճատումներից, ինչպես և ապահովել նրանց աշխատանքը և վորակյալ բանվորների կադր պատրաստել, հատուկ որոնքով դեռահասների բրոնիայի (դեռահասների պարտադիր քանակության) չափ և սահմանվում, վորից պակաս չափով դեռահասներ չի կարելի ունենալ ձեռնարկություններում :

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԲԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Խորհրդային իշխանությանը նախ և ուռաջ հետաքրքրում է բանվորների առողջությունը և ապա նոր միայն արտադրությունը և նրանից ստացվող ոգուտը, ահա և այդ պատճառով ել նա մեծ ուշադրություն է դարձնում ձեռնարկությունների սանիտարական և տեխնիքական դրության վրա, և յեթե այն վատ է, արգելվում է ձեռնարկությունը դործողության մեջ դնել: Համաձայն Աշխտրենսդրության սանիտարական (առողջապահական) տեսակետից ձեռնարկությունները, անգամ նրանց բակերն ու շրջապատը պիտի մաքուր լինեն և ողառատ, բավականաչափ չոր, տաք և լույս ու վնասակար փոշիներից ու դաղերից ողաւտ, վորի վրա հսկելու համար հատուկ սանիտարական և առողջապահական տեսչություն է հիմնված, վոր վոչ միայն հսկում է, վոր աշխտրենսդրության նշված պահանջները կատարվեն, այլև ուսումնասիրում է հակասանիտարական դրությունը, պարզում նրա պատճառները

և սովորեցնում նրանց վերացնելու ձևերն ու ժիջոցները, մշակում հակաթուղթերի (լրացուցիչ սնունդ, կաթ, յուղերի) չափեր բանվորների համար և ձեռնարկատերերին հատուկ առաջադրություններ անում ու ժամանակամիջոց սահմանում կատարելու համար, իսկ նշանակված ժամկետին առաջադրված պահանջները չկատարելու դեպքում քրեյակոսն պատասխանատվության յենթարկում դանցառու ձեռնարկատերերին, ով կուզե լինեն նրանք:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև ձեռնարկությունների տեխնիքական անվտանգության վրա, վորի համար ել հիմնված է տեխնիքական անվտանգության տեսչություն: Տեխնիքական անվտանգության տեսակետից պահանջվում է, վոր ձեռնարկությունների շենքերը հարմարեցրած լինեն տվյալ արտադրության պահանջներին. հոյակապ, բարձր և ընդարձակ լինեն, տեխնիքական սարքավորումը կատարելագործված լինի, մեքենաները և նրանց շարժող մասերը, շարժիչների փոկերը, անիվները, թևերը և այլ դործիքներն անպայմանորեն պաշտպանված լինեն ցանցերով, ծածկոցներով, լարերով, ցանկապատերով, վորպեսզի չըկաչեն մեքենաների մոտով անց ու դարձ անողներին, և չվնասեն նրանց:

Համաձայն Աշխտրենսդրության՝ և վոչ մի դործարան կամ արհեստանոց ինչ չափի յեւ ուղում է նա լինի, յեթե վարձու բանվոր ուժ է կիրառում, չի կարող դործողության մեջ դրվել առանց աշխատանքի պաշտպանության իրավական, տեխնիքական և սանիտարական տեսչության թույլտվության, իսկ խոշոր ձեռնարկությունների համար հատուկ շենք կառուցելիս նրանց մակարդակը (պլանը) նախապես պիտի համաձայնեցնել Աշխտողիմաստի տեխնիքական տեսչության հետ և ապա նոր օկեսել կառուցումը:



Բացի այս բոլոր ձեռնարկումներից արտադրութեան մեջ զբաղված բանվորներին տրվում և հատուկ մասնագիտական հագուստ, վոտնաման, ձեռնոց, գլխարկ, ակնոցներ, փոշեպաշտպան (ընսպերատորներ), դիմակ և հակաթույններ՝ կաթ, յուղ և այլն: Վնասակար ձեռնարկություններում աշխատող բանվորներին համար ըստ նրանց արհեստի սահմանվում և կրճատ բանվորական ուր, այսինքն նրանք փոխարեն 8 ժամի աշխատում են 6 կամ 7 ժամ և իհարկե վարձատրվում են ինչպես 8 ժամ աշխատողներ և տարին մեկ անգամ ստանում են վոչ պակաս քան 2 շաբաթ տևողութեամբ լրացուցիչ արձակուրդ:

Ամբողջ աշխարհագնդի վրա և վոչ մի յերկրի բանվորությունը նման նվաճումներ չունի: Կապիտալիստական յերկրներում ձեռնարկատերը շահաբաժնաված և, վոր փոքր ծախքերով մեծ ոգուտ ստանա, իսկ թե ի՞նչ կլինի վարձկան բանվորի հետ, նրա պետքն ել չե. այդ նրան բոլորովին չի հետաքրքրում:

## 8. ՀԱՎՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ինքն ըստ ինքյան պարզ և և հասկանալի, վոր վորքան ուզում և թող լավ ցանկություններ և որենքներ լինեն, նրանք կմնան թղթի վրա լոկ բառեր և յերբեք չեն իրականացվի, յեթե հատուկ հսկող մարմիններ չլինեն և հարկադրեն ձեռնարկատերերին կատարելու որենսդրութեան պահանջները:

Խորհրդային իշխանությունը այդ հանգամանքը ևս աչքաթող չի արել և չի բավականանում միմիայն որենքներ հրատարակելով, այլև աշխորենսդրությունը և նրանից բղխող բոլոր պահանջները կյանքում փաստորեն իրագործելու համար հատուկ հսկող մարմին և

հաստատել հանձինս Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեարիատի :

Առաջ, ցարական Ռուսաստանում աշխատանքի պայմանների վրա հսկողությունը հանձնված էր ճեղհանդակա՞ն դործարանային և հանքադործարանային դործերի կառավարություններին, վորոնց կազմի մեջ էյին մտնում ինքը նահանգապետը, փոխնահանգապետը, դատախազը, Ժանդարմական վարչության պետը և չորս բանվորներ՝ տեղական դործարանատերերի սիրելիները, իսկ անմիջական հսկիչներ էյին հանդիսանում դործարանային չինովնիկ տեսուչը, վոր ի պաշտոնե աշխիփ կերպով աշխատակցում էր վոստիկանությանը, և վայ այն բանվորին, վոր համարձակվեր տեսուչի հետ խոսելիս մի քիչ լեղվին տալ. չանցած մի քանի րոպե բանվորը անհայտանում էր և մեկ էլ Սիրիբի հեռավոր խորքերից էր նրա ձայնը դալիս : Այս էր նախկին աշխատանքի պաշտպանությունը և նրա իսկական պատկերը :

1917 թ. Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո 1918 թ. մայիսին վերջնականապես լուծվեց դործարանային տեսչությունը և հաստատվեց աշխատանքի պաշտպանության տեսչություն :

Աշխատանքի պաշտպանության տեսուչներին ընտրում են արհեստակցական միությունները և իհարկե բանվորների միջից : Այդ և պատճառը, վոր Աշխատանքի պաշտպանության Տեսչությունը համարվում է Հոկտեմբերյան Հեղափոխության հարազատ զավակը և վարձու աշխատավորների իսկական պաշտպանը : Նման բան բուրժուական յերկրներում վոչ յեղել է և վոչ էլ կարող է լինել. հենց դրանով էլ պիտի բացատրել այն, վոր մեր յերկիրը այցելող ոտաբերկրյա բանվորական կազմակերպությունների պատվիրակները ամենից շատ

հետաքրքրվում են աշխատանքի պաշտպանության մարմիններով, նրանց կազմով, կազմակերպչական կառուցվածքով, ֆունկցիաներով ու առավելապես նրանց գործնական աշխատանքով:

Բանվոր դասակարգը միմիայն խորհրդային իրավակարգում կարող է իր շահերի պաշտպանությունը իր ձեռքը վերցնել և նրա իրագործումը իր ընտրյալներին հանձնել և վոչ թե նշանակովի «չինովնիկների», ինչպես այդ կատարվում եր ցարական Ռուսաստանում: Անգամ այսպես ասած «Հեղափոխական ժամանակավոր կառավարությունը», վորի դուռն էին կանգնած իրենց սոցիալիստ հորըրըրդ մենչևիկները, սիրտ չեյին անում նման քայլ անելու և բուրժուազիայի ճնշման տակ ուզում էյին հին չինովնիկական տեսչությանը պահպանել:

Մեր աշխատանքի պաշտպանության տեսուչները հանդիսանում են բանվորական զանգվածի մտքերի, տրամադրությունների և ակնկալությունների իսկական արտահայտիչները: Այլ կերպ չի յեւ կարող լինել, վորովհետեւ ինչպես վերևում ասինք, մեր աշխատեսուչները իրենք հենց բանվորներն են և ընտրված բանվորական կազմակերպությունների՝ արհեստակցական միությունների կողմից և ամեն ժամանակ անհամապատասխանության դեպքում կարող են հետ կանչվել և փոխարինվել ուրիշներով:

Աշխ. պաշտ. տեսուչները իրենց գործունեյության ընթացքում յենթարկվում են Աշխտոշկոմատի աշխ. պաշտպանության բաժնին, վորն իր աշխատանքները տանում է արհմիությունների հետ սերտ համերաշխությամբ:

Աշխատանքի պաշտպանության տեսչության վրայ լուրջ պարտականություն է դրված, համեմատ վորի

և մենք իրավունքներ և արված : Մեր աշխատանքի օրենսդրութեամբ աշխատեցողների վրա յն դրված բոլոր վարձու աշխատավորների կյանքի և առողջութեան պաշտպանութիւնը . նրանք են , վոր արտի հսկեն թորհրդային իշխանութեան աշխատանքների բնադաւառում հրատարակված վորսչումների և կանոնադրութիւնների իրադրո՞ման վրտ և ամեն տեսակի միջոցներ ձեռք առնեն վարձու աշխատավորի կյանքն ու առողջութիւնը պաշտպանելու և աշխատանքի պայմանները բարելավելու : Աշխատանքի տեսուչները իրավասու յեն Աշխորենսդրութեան խախտումների համար բոլոր խախտարար անձանց , անկախ նրանց դիրքից , վոչ միայն պատասխանատուութեան կանչել վարչական կարգով , այլև քրեական պատասխանատուութեան յենթարկել : Աշխտեսուչները իրենց հետադոտութիւնների ընթացքում , յեթե հանդիպեն այնպիսի յերեվույթների , վոր թեկուզ որենքով կամ պարտադիր վորոշումներով նախատեսված չլինեն , սակայն վտանգ սպառնալիս լինեն աշխատավորների կյանքին կամ առողջութեանը , վոչ միայն կարող են , այլ պարտավոր են անմիջապէս միջոցներ ձեռնարկել այդ յերեվույթները վերացնելու , վորի համար կարող են մինչև իսկ փակել ձեռնարկութիւնը , ումը կուզե նա լինի :

Միմիայն աշխատանքի պաշտպանութեան տեսչութիւնը չե , վոր աշխատում և , այլ աշխատում և աշխատանքի պաշտպանութեան հանձնաժողովը և սեկցիան , վոր հանդիսանում են աշխտեսչութեան օգնական մարմիններ և կազմակերպված են ամեն մի ձեռնարկութիւններում , հիմնարկութիւններում , անտեսութիւններում և գյուղխորհուրդներին կից ամեն մի գյուղում :

Այսպիսով կարելի յե տեսլ , վոր աշխատանքի



պաշտպանութեան մարմիններէ ցանցը այնքան լայնածավալ ե, վոր չկա և վոչ մի անկյուն, վոր ընդդէմ ված չլինի, չկա և վոչ մի վարձու աշխատավոր՝ ժամանակավոր թե ժշտական, բանվոր թե ծառայող, վոր պաշտպանութեան սակ առնված չլինի :

Անշուշտ աշխատանքի պաշտպանութեան բնադավառում դեռ բացեր ունենք, դեռ այն բոլորը չենք արել, ինչ վոր պահանջվում ե վարձու աշխատավորների չահերը լիակատար չափով պաշտպանելու համար, դեռ այդ ուղղութեամբ անելիքներ չատ ունենք և պիտի իրագործենք. այդ բոլորի մասին դրելու համար վոչ թե բրոշյուրներ, այլ հատորներ են հարկավոր, բայց և այս համառոտ բրոշյուրն ել բավականաչափ պարզում ե, թե ինչ ե աշխատանքի պաշտպանութեանը, թե ինչպէս ե նա հասկացվում թորհրդային յերկրներում, թե այդ բնադավառում ինչպիսի նվաճումներ ունինք մենք :

Թորհրդային յերկրների բանվորները առանձին հպարտութեամբ կարող են ասել իրենց յեմքոպական ընկերներին. «Ընկերներ, յեթե անկեղծորեմ ուղում եք պրոլետարիատի կյանքի և առողջութեան հարցերը իսկապէս լուծել, հետեցեք մեզ, դնացեք մեր ճանապարհով՝ իշխանութեանը վերցրեք ձեր կոշտերով պատած ամուր ձեռքը : Համարձակ կովի յեւեք ընդդէմ բուրժուազիայի : Միք լսիլ դավաճան սոցիալիստ-համամայնողականներին, խմբւեցեք ձեր կոմունիստական կուսակցութեան դրոշակի շուրջը և ամուր բռնած սոյն բարձր ծածանեցրեք» :

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044979

(104)

ԳԻՆԸ 20 ԿՈՂ.

A  $\frac{1}{8074}$